

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՈՒՄԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ՝ ՈՒՂԵՎՈՐԱՏԱՐ ՏՐԱՆՄՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՒՄ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱԽՏԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

Ելնելով աշխարհում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) լարված համաճարակային իրավիճակից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում նշված հիվանդության տարածումը կանխելու նպատակով անհրաժեշտ է ապահովել անվտանգության նախազգուշական միջոցառումներ, ինչպես նաև ուղևորափոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցներում կանխարգելիչ և ախտահանման միջոցառումներ:

Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) փոխանցման եղանակները՝ օդակայքիլային, կոնտակտային, ֆեկալ-օրալ:

Կանխարգելիչ միջոցառումներ

Նախնական ուղևորափոխադրումն անհրաժեշտ է զննել ուղևորափոխադրում իրականացնող վարորդներին: Սուր շնչառական վարակներին բնորոշ ախտանշաններով վարորդներին (տենդ/ բարձր ջերմություն, հազ, քթարտադրություն) չի թույլատրվում աշխատել:

Վարորդներն ապահովվում են մեկանգամյա օգտագործման դիմակներով (որը պետք է փոխվի առնվազն 3 ժամը 1 անգամ՝ հիմնվելով աշխատանքի հերթափոխի տևողության վրա), ինչպես նաև ախտահանող անձեռոցիկներով, ալկոհոլային հիմքով ձեռքերի ախտահանիչներով, ախտահանիչ միջոցներով: Մեկանգամյա օգտագործման դիմակների կրկին կիրառումը, ինչպես նաև խոնավ դիմակների օգտագործումը չի թույլատրվում:

Կանխարգելիչ (ընթացիկ) և եզրափակիչ ախտահանում

Ախտահանման աշխատանքների իրականացման համար կիրառվում են սահմանված կարգով Առողջապահության նախարարության կողմից թույլատրված ախտահանիչ միջոցներ, որոնց օգտագործման ցուցումներում նշված են վիրուսային վարակների դեպքում օբյեկտների ախտահանման եղանակները:

Կանխարգելիչ ախտահանումը ներառում է անձնական հիգիենայի միջոցներ, շնչառական օրգանները պաշտպանող դիմակների օգտագործումը, ձեռքերի հաճախակի լվացումը օճառով կամ մշակումը ալկոհոլային հիմքով ախտահանիչներով (հակասեպտիկներ):

Աշխատանքային հերթափոխի ավարտին (կամ առնվազն օրական 2 անգամ երկար երթուղիների ընթացքում) ուղևորների դուրս գալուց հետո իրականացվում է օդափոխում, խցիկի խոնավ մաքրում և կանխարգելիչ ախտահանում, ախտահանող անձեռոցիկներով (կամ ախտահանիչ լուծույթներով) շփման միջոցով մասնավորապես՝

- դռներ, խցիկների բռնակներ, նստատեղեր,
- միջբաղադրային ավտոբուսներում նաև ծալովի սեղաններ, ամրագոտիներ, անհատական կառավարման վահանակներ լուսավորության, օդափոխության, ուղեկցողների կանչի կոճակներ,
- պլաստմասե, մետաղական, կաշվե թիկնակների մասեր,
- անհատական վիդեո մոնիտորներ:

Սանհանգույցների առկայության դեպքում, սահմանված կարգով իրականացվում է մաքրում և ախտահանում:

Երկար երթուղիներում խմելու ջրի մատակարարումն իրականացվում է միայն առանձին տարաների կամ մեկանգամյա օգտագործման սպասքի միջոցով: Երթուղու ընթացքում օգտագործված մեկանգամյա սպասքը, ինչպես նաև անձնական պաշտպանիչ միջոցները, դիմակները, ախտահանող անձեռոցիկները հավաքվում են հերմետիկ փակվող մեկանգամյա օգտագործման պլաստիկ պարկերի մեջ, որոնք տեղադրվում են բեռնախցիկում և ոչնչացվում են ժամանման կետում:

Ախտահանումն իրականացվում է տեղում՝ հիվանդի հայտնաբերման դեպքում: **Ընթացիկ ախտահանումն** իրականացվում է մարդկանց ներկայությամբ թույլատրվող ախտահանիչ միջոցներով շփման միջոցով (կատիոնային մակերեսային նյութերի հիման վրա): **Եզրափակիչ ախտահանումն** իրականացվում է սուր շնչառական վարակներին բնորոշ տեսանելի ախտանշաններով ուղևորի դուրս գալուց հետո:

Մակերեսները մշակելիս օգտագործվում է հեղացրման (ռոռզման) մեթոդը: Ուղևորների բացակայության դեպքում օդն վարակազերծվում է բաց դյուրակիր ուլտրամանուշակագույն ճառագայթիչների, ախտահանող նյութերի աերոզոլների միջոցով:

Տրանսպորտային միջոցի **բոլոր մակերեսները** ենթակա են ախտահանման:

Ախտահանումն իրականացվում է սկսած ուղևորների աթոռներից, հատկապես՝ եթե առկա է սուր շնչառական վարակներին բնորոշ տեսանելի ախտանշաններով ուղևոր: Տեսանելի աղտոտման առկայության դեպքում, նստատեղի մակերեսն անհրաժեշտ է մշակել ախտահանիչ միջոցներով, որից հետո ապահովել խոնավ մաքրում, ապա կրկին ախտահանել:

Միկրոօրգանիզմները ոչնչացնելու համար անհրաժեշտ է դիտարկել ախտահանող միջոցի ազդեցության ժամանակը և ախտահանման աշխատանքային լուծույթի կոնցենտրացիան՝ ախտահանիչ նյութին կից հրահանգներին համաձայն:

Ախտահանման համար կարող են օգտագործվել տարբեր ախտահանիչներ.

- քլոր պարունակող (թթվի նատրիումի աղ՝ աշխատանքային լուծույթ առնվազն 0,06% ակտիվ քլորի խտությամբ, քլորամին Բ՝ աշխատանքային լուծույթ առնվազն 3,0% ակտիվ քլորի խտությամբ),

- թթվածնային ակտիվ (ջրածնի պերօքսիդ՝ առնվազն 3,0% խտությամբ), կատիոնային մակերեսային ակտիվ նյութեր՝ քառորդ ամոնիումային միացություններ (աշխատանքային լուծույթ առնվազն 0,5% խտությամբ),

- երրորդային ամիններ (աշխատանքային լուծույթ առնվազն 0,05% խտությամբ), գուանիդինի պոլիմերային ածանցյալներ (աշխատանքային լուծույթ առնվազն 0,2% խտությամբ),

- սպիրտ (որպես մաշկի հակասեպտիկներ և ախտահանիչներ փոքր մակերեսային տարածքների մշակման համար՝ իզոպրոպիլային սպիրտ զանգված առնվազն 70% խտությամբ, էթիլային սպիրտ՝ զանգվածը առնվազն 75% խտությամբ):

Ակտիվ նյութերի տոկոսային հարաբերությունները նշված է օգտագործման հրահանգներում:

Եզրափակիչ ախտահանումն իրականացվում է մասնագիտացված կազմակերպությունների կողմից:

Տրանսպորտային միջոցի խցիկի և բոլոր աղտոտված հատվածների վերջնական ախտահանման ընթացքում անհրաժեշտ է օգտագործել.

- մեկանգամյա օգտագործման պաշտպանիչ արտահագուստ,

- մեկանգամյա օգտագործման ձեռնոցներ,

- պաշտպանիչ դիմակ, պաշտպանիչ ակնոց կամ դեմքի վահան,

- փակ ճիտքեր ունեցող կոշիկ կամ բախիլներ՝ ցայթքումների բարձր վտանգի կամ կենսաբանական հեղուկներով խիստ աղտոտված մակերեսների դեպքում,

- թափոնների համար նախատեսված անջրանցիկ պայուսակներ:

Ալկոհոլային հիմքով ախտահանիչներով ձեռքերի հիգիենիկ մշակումն իրականացվում է «հավանական հիվանդի» մաշկի, նրա լորձաթաղանթների, արտազատուկների, վիրակապերի և խնամքի այլ միջոցների հետ յուրաքանչյուր շփումից հետո, ինչպես նաև վերջինիս անմիջական հարևանությամբ տեղակայված սարքավորումների, կահույքի և այլ առարկաների հետ շփումից հետո:

Մաքրման և ախտահանման աշխատանքների ավարտից հետո, երբ ձեռնոցները հանված են, պետք է լվանալ ձեռքերը օձառով և ջրով կամ մշակել սպիրտային անձեռոցիկով: Խուսափել դեմքին դիպչելուց չլվացված ձեռքերով կամ նախքան ձեռնոցների հանելը:

Մաքրման համար չի կարելի օգտագործել սեղմված օդ և (կամ) ճնշման տակ ջուր, ինչպես նաև ցանկացած այլ եղանակ, որը կարող է առաջացնել վարակիչ նյութի տարածում՝ աերոզոլի տեսքով: Փոշեկուլները կարող են օգտագործվել միայն պատշաճ կերպով ախտահանումից հետո:

Մաքրման և ախտահանման աշխատանքներից հետո, պաշտպանիչ արտահագուստը, կոշիկները, անձնական պաշտպանիչ և մաքրող սարքավորումները հարկավոր է ծալել և տեղադրել հատուկ նշումով տարողությունների կամ պարկերի մեջ՝ ախտահանման համար:

Ախտահանիչ միջոցները պահվում են արտադրողի փաթեթավորմամբ (օգտագործելուց հետո), ամուր փակված՝ հատկացված չոր, հով և մութ վայրում: Ախտահանման միջոցառումներ իրականացնելու և պատահական թունավորումների առաջին օգնության նախազգուշական միջոցները սահմանվում են յուրաքանչյուր ախտահանիչ նյութի համար օգտագործման հրահանգներում: